## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի
Հանրապետության Արմավիրի
մարզի Ջրարբի համայնք, ՀՀ, Արմավիրի
մարզ, գ. Ջրարբի ,

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

N 20
*07 փետրվար 2019թ.*

Հարգարժան պարոն Մաթևոսյան.

Ձեզ է ներկայացվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնքի ղեկավարի կողմից 2019թվականի հունվար ամսին կարգադրություն չի արձակվել և ընդունվել է երկու որոշումներ:

Առդիր 2 թերթ:

ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՂԱԶԱՐՅԱՆ

*Կատ. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Վ. Վարդանյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ջրարբի, ,

# Ո Ր Ո Շ Ու Մ

17 ՀՈՒՆՎԱՐԻ 2019թվականի N 01-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով ավագանու 2006 թվականի օգոստոսի 18-ի N 01 որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Արմավիրի մարզի Ջրարբի համայնքի 04-086-009-010 ծածկագիրը կրող, անշարժ գույքին և 0.104 հա տնամերձ հողամասին տրամադրել հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Ջրարբի համայնք, Հ.Թումանյան փողոց 8-րդ շենքի 2-րդ բնակարան հասցեն :
2. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանման կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**Համայնքի ղեկավար՝** **ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ**

2019 թ. հունվար
17

գ.Ջրարբի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ջրարբի, ,

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՀՈՒՆՎԱՐԻ 2019թվականի N 02-Ա

### ՋՐԱՐԲԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Ե. ՉԱՐԵՆՑ ՓՈՂՈՑԻ 7/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.0229 ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԸ , 30.6 Ք/Մ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՀԵՍՏԸ 0.7Ք/Մ ՊԱՐԻՍՊԸ, 5.3 Ք/ԾԱԾԿԸ ԵՎ 2.7 Ք/Մ ԶՈՒԳԱՐԱՆԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թվականի ապրիլի 17-ի N470-Ն և 2006թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումների դրույթներով, հաշվի առնելով հողամասն ու կառույցն իրականացրած անձին՝ Ռաֆիկ Գառնիկի Պալյարյանի, գնման նախապատվության իրավունքով / ուղղակի վաճառքով / տրամադրելու վերաբերյալ 2018թվականի դեկտեմբերի 12-ին տրված 1 գրավոր առաջարկությունը և վերջինիս կողմից տրված համաձայնությունը.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Արմավիրի մարզի Ջրարբի համայնքի սեփականություն հանդիսացող / կադաստրային ծածկագիր 04-086-0010-0012-001/Ե. Չարենց փողոց 7-րդ շենքի 2-րդ բնակարան հասցեում գտնվող 0.0229հա բնակավայրի այլ հողատեսքը, 30.6ք/մ տնտեսական պահեստը, 0.7ք/մ պարիսպը ՝ 5.3 ք/մ ծածկը և 2.7ք/մ զուգարանը ուղղակի վաճառքով օտարել այդ շինությունները ինքնակամ կառուցող Ռաֆիկ Գառնիկի Պալյարյանին :

2. Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասում քաղաքացու կողմից կառուցած կառույցի և հողամասի օրինականացման վճարները՝

1) Վաճառվող հողամասի 1 քառակուսի մետրի համար գին սահմանել 810 կադաստրային գնի չափով, որը կազմում է 229 x 810 =185490 / մեկ հարյուր ութսունհինգ հազար չորս հարյուր իննսուն/ Հայաստանի Հանրապետության դրամ

2) վաճառվող պարիսպի 1 քառակուսի մետրի համար գին սահմանել 3300 կադաստրային գնի չափով, որ կազմում է 0.7x 3300=2310/ երկու հազար երեք հարյուր տաս/ Հայաստանի Հանրապետության դրամ:

3) տնտեսական պահեստի վաճառքի վճարը՝ յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար 3300 կադաստրային գնի չափով, որը կազմում է 30.6 x 2200=67320/ վաթսունյոթ հազար երեք հարյուր քսան /Հայաստանի Հանրապետության դրամ:

4)ծածկի վաճառքի վճարը՝ յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար 2200 կադաստրային գնի չափով, որը կազմում է 5.3x2200=11660/տասնմեկ հազար երեք հարյուր վաթսուն/ Հայաստանի Հանրապետության դրամ:

5) զուգարանի վաճառքի վճարը՝ յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար 2200 կադաստրային գնի չափով, որը կազմում է 2.7x 2200 = 5940/ հինգ հազար ինը հարյուր քառասուն / Հայաստանի Հանրապետության դրամ:

Որոշման ընդունման օրվանից սկսած շինության և հողամասի օրինականացման համար հաշվարկված վճարները 60-օրյա ժամկետում պետք է վճարվի 87230 ՀՀ դրամ Ջրարբի համայնքի վարչական եկամուտների 900325183185 հաշվեհամարին, իսկ 185490 ՀՀ դրամը ֆոնդային եկամուտների 900325183136 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

Վճարման ենթակա է 272720/ երկու հարյուր յոթանասուներկու հազար յոթ հարյուր տաս/ Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով որոշման մեկ օրինակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանում:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**Համայնքի ղեկավար՝** **ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ**

**2018 թ. հունվար 25**
**գ.Ջրարբի**